ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 30.03.2026թ. հ. 81-2026թ. գրության՝ Ավան վարչական շրջանի նշված հասցեների վերելակների խնդրների վերաբերյալ, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության, ինչպես նաև Ավան վարչական շրջանի աշխատակիցների հետ համատեղ իրականացվել է շրջայց գրությամբ նշված հասցեներում և պարզվել է հետևյալը.

- Բրյուսով թաղամասի հ.68 շենքի վերելակը փոխարինվել է նորով 2024 թվականին, վերելակում խնդիր է առաջացել 2026 թվականի մարտի սկզբին, որը վերացվել է:

- Բրյուսովի թաղամաս հ.69 շենքի 3-րդ մուտքի վերելակը փոխարինվել է նորով 2025 թվականին, իսկ մյուս մուտքերի վերելակների փոխարինման հարցը կքննարկվի լրացուցիչ ծրագրեր իրականացնելու ժամանակ՝ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից համապատասխան հայտ ստանալու դեպքում:

- Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.1/1 շենքի մարդատար վերելակը 2022 թվականին փոխարինվել է նորով, իսկ բեռնատար վերելակի փոխարինման հարցը կքննարկվի լրացուցիչ ծրագրեր իրականացնելու ժամանակ՝ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից համապատասխան հայտ ստանալու դեպքում:

- Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.1/11 և հ.1/12 հասցեներով բազմաբնակարան շենքեր չկան:

- Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.2, հ.4, հ.3/3, հ.3/6, հ.2/3 շենքի 2-րդ մուտք, Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի հ.3/3 շենքի 3-րդ մուտք և հ.2/6 շենքի 2-րդ մուտք հասցեների վերելակների փոխարինման աշխատանքները ներառված են 2026 թվականի ծրագրերում, մրցույթները կայացել են և հայտերը գտնվում են գնահատման փուլում:

- Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.3/2, հ.3/5 շենքերի վերելակների փոխարինման հարցը կքննարկվի լրացուցիչ ծրագրեր իրականացնելու ժամանակ՝ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից համապատասխան հայտ ստանալու դեպքում:

- Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ. 1/4 շենքի մարդատար վերելակը փոխարինվել է նորով 2023 թվականին, իսկ բեռնատար վերելակի փոխարինման հարցը կքննարկվի լրացուցիչ ծրագրեր իրականացնելու ժամանակ՝ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից համապատասխան հայտ ստանալու դեպքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ